

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

2016 Թ.-Ի ՄԱՐՏԻ 5-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

I. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2014-2015 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետի դ) ենթակետով՝

ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի 2014-2015 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Գավառի պետական համալսարանի 2014-2015 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

II. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի ֆինանսական հաշվետվությունը՝ համալսարանի 2015 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ՝

ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2015 թվականի ֆինանսական հաշվետվությունը:

III. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2016 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝

ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2016 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ ԳՊՀ բյուջեն:
2. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորին՝ 2016 թվականի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

Խորհրդի նախագահ՝

Հ. Հ. Հակոբյան